ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«11» 06 2025թ.

N 20/386

Օր. N 1

«ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ի
տնօրեն Կ. Սողոմոնյանին
Հասցե՝ ք.Երևան, Բաղյան 1 նրբ. 3շ. 46բն.
ՀՎՀՀ՝ 03566097
Էլ. հասցե՝ piptextile2022@mail.ru

Հարգելի՛ տիկին Սողոմոնյան

ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) (ՀՎՀՀ 03566097, գործունեության հասցե՝ ք.Երևան, Բաղյան 1 նրբ. 3շ. 46բն.) միջև 23.05.2025 թվականին կնքվել է N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է (N 15 չափաբաժնով՝ 360000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 400 հատ փողկապների, N 16 չափաբաժնով՝ 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 100 հատ փողկապների և N 19 չափաբաժնով՝ 72000 (յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 100 հատ գլխարկների) մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը՝ Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 2.4.1 և 2.4.4 կետերի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ N 15 և N 16 չափաբաժիններով Ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 30.06.2025թ., իսկ N 19 չափաբաժնով 30.09.2025թ.:

Վաճառողը 02.06.2025թ. թիվ 55/058 գրությամբ հայտնել է Գնորդին, որ 2025թ. մայիսի 23-ին «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության միջև կնքված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» պայմանագրի շրջանակում N 19 չափաբաժնով նախատեսված 100 հատ գլխարկների մատակարարումը չի կարող իրականացնել, քանի որ էլեկտրոնային աճուրդի ընթացքում թյուրիմացաբար առաջարկված գնի մեջ մեկ հատ «0»- զրո թիվը բաց է թողնվել, որի արդյունքում 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի փոխարեն նշվել է 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, որն էլ գլխարկների ինքնարժեքի 10 տոկոսն անգամ չի կազմում, ուստի Վաճառողը ի վիճակի չէ արտադրելու և մատակարարելու Պայմանագրով նախատեսված գլխարկները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով, «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊ ընկերության 02.06.2025թ. թիվ 55/058 գրավոր հավաստումը՝ Պայմանագրի N 19 չափաբաժնով ապրանքի մատակարարումից հրաժարվելու մասին և Պայմանագրի 8.11 կետը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի՝ չմատակարարվող N 19 չափաբաժնի ապրանքի մասով լուծում է 23.05.2025թ. կնքված N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է** պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով (տուժանքի համաձայնագրեր՝ Հավելված N 3.2 և Հավելված N 4.1) ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու /ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 և 900008000664 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու/ նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ N «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-7» ծածկագրով պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրի բնօրինակը):

Տեղեկացնում ենք, որ եթե «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 03566097, գործունեության հասցե՝ ք.Երևան, Բաղյան 1 նրբ. 3շ. 46բն.) կողմից վճարման ենթակա գումարները (պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը՝ 112500 (մեկ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ) փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված վերոհիշյալ գանձապետական հաշվեհամարներին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Ա. Հակոբյան